# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-Ի ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-ԻՆ

ԱԴԻՍ-ԱԲԵԲԱ

Փառք մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսին, որ իր հրաշափառ ծննդյամբ ու աստվածահայտնությամբ աշխարհին և մարդկության կբաշխե իր կենարար ու փրկարար շնորհները:

Հայրական սիրով և խոր հարգանքով կողջունենք Ձեզ և կշնորհավորենք Ծննդյան և Աստվածահայտնության սուրբ հանդիսություններու առիթով և կաղոթենք հայոց բազմադարյան Ս. Էջմիածնի Սեղանի առջև՝ առողջության և փառավոր կյանքին համար Ձերդ Կայսերական Վեհափառության և Ձեր աստվածասեր գործոց հաջողության, Ձեր ազնիվ երկրի ծաղկման և աստվածապաշտ եթովպական ժողովրդի բարօրության և երջանկության համար:

Աստվածային օրհնություն և շնորհք և խաղաղություն «Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ հոգւոյն ձերում, ամէն»:

**ՎԱԶԳԵՆ Ա**
**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԷՋՄԻԱԾԻՆ

* * *

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենաանկեղծ շնորհակալություն Ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր բարի ցանկությունների և ազնիվ պատգամի համար, որը խորապես երախտապարտ է թողնում Մեզ:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ
**Կայսր Եթովպիայի**

ԱՍՄԱՐԱ